



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ  
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿԵՆ ՄԻԱՑԵԱԼ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԸ**

Երեքշաբթի, 16 Մայիս 2006ին, Միջին Արեւելքի Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդները գումարեցին ժողով մը, քննարկելու համար այս եկեղեցիներուն առնչուող ու զանոնք մտահոգող հարցեր: Քննարկման սիւթերուն կարգին էին «*Տա Կինչի Զոտ*»ը եւ «Յուդայի Աւետարանը»:

Ժողովը կը հիւրընկալէր Անտիոքի Ուղղափառ եկեղեցւոյ Առաջնորդ Ճոզէֆ Եպիսկոպոսը: Մասնակցեցան Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Առաջնորդ Արեւմտեան Թեմի, Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտերեան, Առաջնորդ Արեւմտեան Թեմի, Գերշ. Տ. Սրապիոն Եպս., Առաջնորդ Ղրպտի համայնքի, եւ Գերշ. Տ. Եւոճին Զափլան Արք., Առաջնորդ Ասորի Ուղղափառ համայնքի: Ներկայ էին նաեւ Ս. Նիքոլա եկեղեցւոյ Հովիւ Հայր Մայքըլ Նեժիմ եւ Լեռնալիբանանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հովիւ Հայր Ապտալլա Չէյտան:

Ժողովի աւարտին, որոշուեցաւ հրատարակել միացեալ հաղորդագրութիւն մը, մեր հաւատացեալ ժողովուրդին ուշադրութիւնը հրաւիրելու համար «Տա Կինչի Զոտ»ին եւ «Յուդայի Աւետարան»ին վերաբերող հարցերու վրայ: Հաղորդագրութիւնը հետեւեալն է.-

«Մենք՝ Ուղղափառ եկեղեցիներու Առաջնորդներս, այսու մեր հաւատացեալ ժողովուրդը կը հրաւիրենք զգուշանալու «Տա Կինչի Զոտ» ժապաւենէն, որ կը խեղաթիւրէ Մեր Տիրոջ՝ Յիսուս Զրիստոսի մասին ճշմարտութիւնները: Երեւակայութեան ու ստապատիր իրադարձութեանց վրայ հիմնուած այս ժապաւենը կը փորձէ վարկաբեկել մեր ուղղափառ հաւատքի հիմունքները, եւ յարձակման թիրախ կը դարձնէ Նոր Կտակարանի ճշմարտութիւններն ու հաւաստիութիւնը:

Մեր հաւատացեալները կը զգուշացնենք նաեւ «Յուդայի Աւետարան»էն: Այս «աւետարան»ը, որ աւելի ծանօթ է **Յուդայի Փաստաթուղթ** անունով, ոչ «բարի լուր» («աւետարան»ի իսկական իմաստը) է, ոչ գրուած է Յուդա Սկարիովտացիի՞ կողմէ, ոչ ալ մանաւանդ «նորութիւն» է: Սկզբնական արձանագրութիւնը մեր Սրբազան Հայրերուն կողմէ մերժուած ու դատապարտուած էր քրիստոնէութեան առաջին դարերուն իսկ:

Այն պահուն, երբ զանգուածային հաղորդակցութեան միջոցները հակաքրիստոնէական անդադար քարոզչութեամբ կ'ողողեն հրապարակը հանդէպ մեր Տիրոջ՝ Յիսուս Զրիստոսի, մենք վստահ ենք, որ դուք անսասան ու հաստատ կը մնաք ձեր ուղղափառ հաւատքին մէջ: Մարտնչելով ի խնդիր մեր Առաքելական

Հաւատքին, որ մեզի կ'ուսուցանէ Յիսուս Քրիստոսի մասին ճշմարտութիւնը, մենք պետք է անսասան մնանք քարոզչական այս միջոցներուն կողմէ շղթայազերծուած յարձակումներուն դիմաց, որոնք թիրախ կը դարձնեն չորս Աւետարաններուն ճշմարտութիւնն ու հաւաստիութիւնը»:

## FELLOWSHIP OF ORIENTAL ORTHODOX SPIRITUAL LEADERS ISSUE JOINT COMMUNIQUE

On Tuesday, May 16, 2006, the spiritual leaders of the Oriental Orthodox Churches met to discuss various issues of concern. Included in the discussion were the “Da Vinci Code” and the “Gospel of Judas”.

The fellowship was hosted by H.G. Bishop Joseph Al-Zehlaoui of the Antiochian Orthodox Christian Archdiocese, and with the participation of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, H.G. Bishop Serapion of the Coptic Orthodox Church, and H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan of the Syriac Orthodox Church. Also in attendance were Fr. Michael Najim of St. Nicholas Cathedral and Fr. Abdallah Zaidan of Our Lady of Mt. Lebanon Cathedral.

At the conclusion of the fellowship, it was decided that a joint communique be issued to the faithful regarding the “Da Vinci Code” and the “Gospel of Judas”. The following is the text of the communique.

“We, as Orthodox Bishops caution our faithful about the movie ‘Da Vinci Code’, which falsifies the reality of our Lord Jesus Christ. Based on fiction and falsehood, this movie tries to discredit the fundamentals of our Christian Orthodox faith and attack the authenticity of the New Testament.

Also, we caution our faithful about the ‘Gospel of Judas’. This ‘gospel’, better entitled the *Judas Document* is neither ‘good news’ (the meaning of ‘gospel’) nor was it written by Judas Iscariot, nor is it even particularly ‘new’. This ancient manuscript was roundly condemned and refuted by the early Church Fathers.

In the midst of the media’s relentless avalanche of anti-Christian propaganda concerning our Lord Jesus Christ, we are confident that you are standing firm in your Orthodox faith. Battling for our Apostolic Faith, which bears the Truth of who Jesus Christ is, we must remain undismayed by attacks that the media launches against the accuracy and veracity of the four Gospels.”